ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

<< >> **2016 թ.** **N**

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ տիկին Լիանա Դոյդոյանին
(Հասցե. ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ)

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին ուղղված տեղեկատվություն ստանալու հարցման վերաբերյալ Ձեր դիմումին՝ հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ կառավարության աշխատակազմ էլեկտրոնային եղանակով 2016թ. հունվարի 1-ից առ այսօր ստացվել է թվով 7 տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցում:
2. Նշված բոլոր հարցումները վերահասցեագրվել են ըստ իրավասու մարմինների, քանի որ ՀՀ կառավարության աշխատակազմը տվյալ դեպքերում տեղեկատվություն տնօրինող չի հանդիսացել:
3. ՀՀ կառավարությանը էլեկտրոնային եղանակով հարցում-դիմում կարելի է ուղարկել հետևյալ հղումով՝ https://www.e-gov.am/your-question/:
4. Նեկայումս աշխատանքներ են տարվում ՀՀ կառավարության պաշտոնական կայքի առկա հնարավորությունները ՀՀ կառավարության 15.10.2015թ. հ 1204-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև «Հաճախակի տրվող հարցեր» բաժին ստեղծելու ուղղությամբ:

Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության պետ **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ**

կատ. Հ. Սիմոնյան
հեռ. 010-51-58-73